անտառները իրենց դարաւոր ճիւղերը պաղատանքով երկարում են դէպի նրան՝ եկէք կըտրեցէք։ Ահագին թուով շոգեմեքենաներ սպասում են երկաթագծերի, բամբակը Եգիպտոսի տունը պիտի քանդի եւ ի՞նչ ծխախոտ, ի՞նչ ծխախոտ... Սառոյց տեղեկութիւններ կան ոսկիի եւ արծաթի մասին, իսկ մարմա՞րը...

Ահագին հեռանկարներ։

Մի քի՛չ դրամագլուխ, մի քի՛չ դրամագլուխ։

«Պատրաստեցէք զեկուցում մը, եթէ ծխախոտ կան, բան մը չէ»...

Եւ Մարկոս աղան խմում է ճերմակ գինին։ Լաւ պատրաստուած է, բրաւո՛, բրաւո՛...

* * *

Միւս սեղանների շուրջը նստած, կոմունիստական կուսակցութեան վարի խաւերը — երիտասարդ մոլեռանդնե՛ր — յօնք են ժողովում եւ գորտերի պէս իրենց գլուխը ջրից դուրս հանում, զեկավար ընկերների դէմ։

Հանգստացէք, հանգստացէ՛ք, դա ժամանակաւոր տակտիկա է։ Անշուշտ որ, Մարկոս աղան սրիկայ բուրժուայի մէկն է։ Բա՛նտ, Զեկա՛, գնդակահարե՛լ՝ երեք տարի առաջ։ Այսօր, զգոյշ ընկերներ... Դա լենինեան, տրամաբանական մի ընթացք է, պատմական դիալեկտիկայի մի որոշ շրջան։ Վերջապէս, փողի պէտք կայ։ Զգո՛յշ, ընկերներ, զգո՛յշ...

Երիտասարդ մոլեռանդների առջեւ լուսինը ծածկւում է, նրանք մտնում են ջուրի մէջ եւ խորոված ի պատառները կրծում։

Մարկոս աղան ծխախոտ է վառում, իւղալի աչքերով իր շուրջը նայում, ժպտում եւ համով պատմութիւն պատմում։

* * *

«Աղբար, ես ալ ժողովրդի զաւակ մըն եմ»...

Տեսարանը փոխւում է։

Շատ տարիներ առաջ, Կիլիկիայում։ Տօթ է, շուքերի տակ շունները պառկել են, սըրճարանների առջեւ մարդիկ նստած ծուլօրէն նարգիլէ են ծխում։

Երկինքը մութ կապոյտ է, կախուած տանիքների վրայ, իսկ Մարկոսը նպարավաճառի մօտ աշակերտ է։ Լայն շալւարը ծունկերի շուրջը տրորելով, ծայրերը իւղոտ ֆէսը գլխի կատարին, հաստ մի զօտի մէջքին կապած, ներս է հրաւիրում յաճախորդներին, պոռում, կանչում, դէս դէն վազում։

Խելքը գլխին տղայ է։ Փարայի արժէքը գիտէ, բաստրման բարակ կտրել, ձիթաւիղը խառնել, գինին խարդախել, կշիռքի հետ վարուել ինչպէս որ պէտք է ու, մանաւանդ, յօնքերով խօսել։

Զէթի հետ խառնում է նաեւ լեղուները։ Մէկ խօսք հայերէն՝ երեք բառ թրքերէն, մէկը չիտակ՝ չորսը սուտ։

Ուղեղը բաց է, իր կօշիկների նման։

Խելքը գլխին տղայ։

«Այն առենը ազգային գործերով ալ զբաղուեցանք»...

Տակառների տակ Լոնտոնից եկած եւ բարակ թղթի վրայ տպուած թերթեր էր թաղցրել։ Ժողովներ։ Ազգային երգեր, որ երգում են չկռուողները։ Կէս օրա կաշեր պանիր՝ գողցած՝ ազգը փրկողների համար։ Զէնքեր։ Գիշերը քաղաքի պատերի տակից սողալով գընալ։ Մարդ սպասել, նշան տալ։ Անքուն խանութ վերադառնալ։ Այդպէս մի ամիս, այդպէս երկու ամիս։ Խանութպանի աչքերի մէջ յանկարծակի բոցեր։ Ծե՛ծ, ծե՛ծ։

«Ա՛լ, ազգային գործերուն չխառնուեցայ»...

Լայն շալւարը ծունկերի շուրջը տրորելով, ֆէսը գլխի կատարին, ձեռքերը խոնարհաբար սեղմած կրծքին, շարունակեց պոռալ, կանչել, յաճախորդը ներս հրաւիրել։

Դէպքեր։

Կիլիկիայի գագաթին բենգալեան կրակներ են վառւում։ Կռիւներ։ Բանտ, կախաղան։ Մարկոսը գիշերները քուն չունի, վախում է։ Գօտիի մէջ մի քանի ոսկի է փաթաթում ու դաղթում է։

* * *

Անապատը չորացած արգանդի նման պառկել է։ Աւազը ծարաւ է, արեւը՝ ճերմակ հրդեհ։ Գորշ մի սոսկում, որ փիղերի կաշին իսկ չորցնում է։ Մարդկանց երակների մէջ իւղ է վազում, ուղեղը հալւում է եւ միսերը աղ են քրտնում։

Հարեւստան։

Մարկոսը, մերկ, ջուրով լեցրած տակառի մէջ նստել է եւ անցնող կարաւաններին, անկա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան